



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՆՈՒԵՐ ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ

ԲԱԲԱ ԱՌԱՔԵԼԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Դ... Գ Ի Ւ Ղ Ի Ա Ն Ց Ե Ա Լ Ի Ց

(Խճ. յիշողութիւններից.)



ՄՈՍԿՈՒԱ

ՀՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԻ ԴԱՐԵԱՆԻ

1891

(28)

ԱՐԵՒ

602



ԱՐԵՐԻ
6022 ՆՈՒԵՐՈ ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻՆԵՐԻՆ
01 JAN 2009

ԲԱԲԱ ԱՌԱՔԵԼԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Դ 1891 ՀՎԿԱ II ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐՈՊԱՆ ՊՈԽԱՎԱՐ

Ձ Պ... ԳԻՒՂԻ ԱՆՑԵԱԼԻ Ց

ՀՀ 1108
5, -1



ՄՈՍԿՈՒ

ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆԻ

1891

2008 MAR 10

የኢትዮጵያ ሪፐብሊክ

ՀՅՈՒԹԻՑԱԾԱՐ

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 11 марта 1891 г.



4465
41

Типогр. М. Бархударянъ, Газет. пер. д. Ліанозова, Москва.

18594

ԲԱՐԱ ԱԽԱԳԵԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ

Այր Արաքսի ափերին, վայրենի և մերկ
ապառաժների կրծքին փռուած է մի
փոքրիկ զիւղ, որն իր արշեստական բուսակա-
նութեամբ, իր բազմաթիւ պտղատու այգի-
ներով և յորդահոս աղբիւրներով կատարեալ
օազիսի է նման: Պատմում են, որ այդ տեղը
գետատեղ է եղել ուր բնակութիւն է հաստա-
տել մի զարմանալի ժողովուրդ, որ տասնեակ
տարիների ընթացքում իր հսկայական տո-
կունութեամբ, կամքի ոյժով և համբերութեամբ
այդ քարաստանում այնափսի բուսականութիւն
և այգիներ է զարգացրել որոնց պտուղները
յայնին են ամբողջ Ազարանում: Այդ Դ...
զիւղն է—իմ Տնիկավայրը, որ Գողթան գաւա-
ռի զիւղերից մէկն է:

Ամառը, օրուայ երկար և ծանր աշխատանք-ներից յետոյ, մեր գիւղացիք սովորութիւն ու-նէին երեկոյեանները խմբուել փողոցներում մէկի կամ միւսի դռանը, մի ծառի տակ կամ առ-ուակի մօտ հանգիստ զրցյցներ անել իրենց գործերի մասին։ Ես շատ էի սիրում երեկոները դուրս գալ փողոց, մեր հարեան Բաբա Առաքելի մօտ, որը հսկայ չինարի տակ, առուակի մօտ նստած պատմութիւններ։ Առանձին հետաքրքիր պատմութիւններ։ Առանձին հետաքրքրութեամբ ես միշտ լսում էի Բաբայի այն պատմութիւնները, որ վերաբերում էին թէ Դ. գիւղի անցեալն և թէ իր երիտասարդական կեանքին։

Իկով Բաբա (հայր) Առաքելը,—այդպէս էին կոչում նրան բոլոր գիւղացիք,—94 տարեկան մի ծերունի էր, որի բարձր հասակը երկար տարիների ընթացքում կուցել ցածրացել էր, իսկ յաղթանգամ կազմուածքը նիշարել մա-շուել էր։ Երեսը և մազոտ բաց կուրծքն արել կիղող ճառագայթներից այրուել սեացել էին։ Նրա ալեգարդ միրուքը սփոռցի նման փռուած էր լայն կրծքի վերայ։ Ծերունու լայն ճակատը,

երեսը և վեզը ծածկուած էին բաղմաթիւ կըն-ձիոներով և հաստ, սպիտակ յօնքերի տակից գեռ ևս փայլում էին նրա բոցավառ սև աչքերը. նա լաւ տեսնում, լսում և շարժվում էր։ Օրեկան մի քանի անգամ սոսով իր հեռաւոր այգին գնալը և վերաբառնալը նրա համար սովորական բան էր։ Օրուայ ծանր աշխատանք-ներից յետոյ ծերունի Առաքելը երեկոյեանները դուրս էր գալիս փողոց և նստում էր իր տան դռանը տնկած մեծ չինարի տակ։

Մենակ ժամանակը նս միշտ մնայլ էր լի-նում և այդ դրութեան մէջ, գլուխը քարշ զյած՝ կամ երկայն չիրուխն էր ծխում և կամ ձեռնափայտով գետնի վերայ գծագրում։ Նրա դէմքն այն ժամանակն էր միայն բայցում, երբ մէկը նրա հետ նստած զըսց էր անում կամ երբ նրա ծուները խաղից յոգներուց՝ գալիս էին ընկնում պապիկի գոգը, կամ փէշց բռնում, քաշքշում։ Ծերունին նրանց փայփայում էր և խրատում։

Երեկց էր, զիւղում արել զեռ նոր էր մայլը մտնում: Երջապատող լեռների հսկայական շուաքը ծածկել էր արդէն զիւղը և ամբողջ այգեստանը. միմիայն արեւելեան լեռների սրածայր գագաթները գեռ լուսաւորվում էին արեւի վերջին կարմիր ձառագայթներով:

Արել մտնելուց յետոյ, կէսօրուայ տօթից թառամած բնութիւնն սկսել էր արթնանալ, բարձրացած մեղմ զեփիւոը քնքշաբար շարժում էր կանաչազարդ ծառերի ծիւզերը, տարածելով ամենայն տեղ կենդանացուցիչ զովութիւնն: Հազարաւոր ձնձուկներ վերջացնելով օրուայ աշխատանքը, հաւաքուել էին հսկայ չինարի վրայ և սկսել իրանց ուրսիս ձվձվոցը: Բարան արդէն նստել էր իր սովորական տեղը և չիրուխ ծխելով, ձնձուկների երգեցողութիւնն էր լսում:

— Բարի իրիգուն, Բարա, — ողջունեցի ես, մօտենալով ծերունուն:

— Այ, Աստուծոյ բարին, որդիս, Աստուածքեղ պահի, ի՞նչ խէր, ի՞նչ խարար ունես:

— Խեր է, փառք Աստուծոյ. ինչու բազար չես զուրս գալիս, Բաբտ, այլ միշա մենակ ես նստում այս չինարի տակ, երեկի շատ հով է, նորա համար:

— Է՛շ, որդիս, հրէս տասը տարի է, ով է բազար գուրս գալիս, իմ բազարս էս չինարի տակն է, թէ մի երկու մարդ հաւաքվում են, հօ խօսում ենք դէսից-դէսից, թէ չէ վերև Աստուծոյ ձնձզուկները խօսում են ու խօսում: Աստուած էս աղբեւը հանօղի ու չինար աղնկողի հոգիները լուսաւորի. հանգուցեաները, որդիս, քիչ բան չեն արել մեր թաղի համար:

— Բայց ովքեր են եղել գրանք, — հարցրի ես, չնայելով որ արդէն զիտէի:

— Էս չինարին անկել է ողօրմած հոգի հայրս իր փոքր ժամանակը, Էնպէս որ պակասն էլի մի 130 տարեկան կըլինի, բայց աղբեւըն աւելի մեծ է. չինար անկօղը, չէ՞ որ ջրին է յօյս կապել ու անկել: Աւած լինես, լած չ'լինես, մեզ հարեան, էն տնումը Սողոմոն անունով

մէկ մարդ կար, լուսահոգին շատ բարի և շատ
էլ ունեսր ծերունի էր, հօրիցս բաւականի մեծ
էր: Էն ժամանակի, ի հարկէ, ինչքան էտեղ
բաղ ու բաղչայ ևս տեսնում, սրանք չ'կային,
էս տեղը մի քարքարոտ, անպէսոք տեղ էր: Բա-
րեհոգի: Սողոմնն ուղեց, որ իր յիշատակը մահից
յետոյ չ'կորչի զիւղից, վճռեց մի բարեգործու-
թիւն անել զիւղին և երկու տարուայ մէջ ի՞նչ
ծախսեր արեց, որքան մշակ բանեցրեց, որ վեր-
ջը կարողացաւ էս աղբիւրը դուրս բերել: Մեր
թաղի մարդիկն ի հարկէ շատ ուրախացան
այդ բարի գործի համար և նրա անունն ան-
մահացնելու համար աղբիւրի անունը զրին
«Սողոմնի աղբիւր»: Երբ աղբիւրը դուրս եկաւ,
շուտով հողը մաքրեցին, ծառեր անկեցին, էն-
պէս որ մեր թաղը հիմայ կատարեալ զրախտ
է գարձել: Իմ հայրս էլ ջոկի կողքին անկել է
մի փոքրիկ չինարի, որ հիմայ, տեսնում ես որքան
աներ է ծածկում իր ծիւղերի տակ և մեծ շուաք
զցում չորս կողմը: Էդ շուաքովն էլ օգտվում ենք
մենք էս շոդ ժամանակներին: Տեսնում ես, որ-
դիս, որքան լաւ պառուներ է առիս ապագայում

բարի գործը. բոլորը մեզ համար պէտք բարի
օրինակ լինի, բայց ուր է մեր ժողովուրդը սի-
րում է ուրիշի տնկած ծառի պատւղը հանգիստ
վայելել բայց ինքը մէկ ծառ էլ չի ուզում
տնկել: Մի էդպիսի և զրանից էլ բարձր օրինակ
տուեց մեզ մելիք Ղարագեօղը, բայց էդ էլ կա-
մայ կամաց կորաւ, անհետացաւ մեր զիւղից:

— Այդ ի՞նչ պատմութիւն է, պապիկ, խընդ-
րեմ պատմես: Մելիք Ղարագեօղի անոնք փոք-
րութիւնից էլ շատ եմ լսել, բայց նրա արած-
ներից ոչինչ տեղեկութիւն չ'ունեմ: Ի՞նչ է ա-
րել մելիքը:

— Ոսումես, ի՞նչ է արել մելիք Ղարագեօղը:
Ողսրմած հոգին եթէ կենդանի լինէր, մեր զիւ-
ղըն էս օրումն չէր լինիլ: եթէ նա կենդանի լի-
նէր, ես էլ էս հասակովս մի քանի խալվար
ցորենի համար զիւղենէրն էն հեռու արառումը
չէի քնիլ, տունը մենակ թողած: Էս քա՞նի
օր է, որ չեօլում վեր եմ ընկած, թէ ի՞նչ է
ցորեն եմ պահում, որ աւաղակ թուլքերը շ-
գան չգողանան: Աբա դու ասա, էս կեանք է,
էս օրէնք է:

— Այս, մեր զիմանկելի անտանելի է, ևս զարմանում եմ, որ մեր զիւղացիք հանգիստ նստած են և ոչինչ չեն անում, այս զիշեր էլ, ինչպէս բազարում պատմում էին, անհաւատներն եկել են Գալուստենց ծիրանը հաւաքել՝ տարել:

— Տեսնում ես, որդիս, դու էլ ես առում որ էդ վաս է, անտանելի է, միենոյնն ասում է և մեր ամեն մէկ զիւղացին, բայց գործ ըսկ-սող, զլուխ անցնող ոչ ոք չկայ: Զէ որ մելիքի պարտաւորութիւնն է գողերին բռնել և պատճել. չէ, ախսէր, էսպէս մելիք որ մենք ունենք, զարմանք չէ եթէ թուլքերը գանե, մեր հարս, աղջկերքն էլ փախցնեն,—զայրացած պատասխանեց ծերունին: Է՛ղքան էլ թոյլ մարդ. զիւղը քանգուեց էլի, ախսէր, մարդու համբերութիւնը բողազն է հասնում: Մշտ... երանի ձեզ, անցեալ օրեր, երանի քեզ մելիք Դարագեօղ, որ էս օրերս չես տեսնում, —մի առանձին ախով արտասանեց ծերունին:

— Բաբա, դու մերոնց լրաց ես զարմանում, բայց տես, թէ ուրիշ տեղերում ինչեր է կատարվում: Երէկուայ լրազրում զրուած էր, թէ

ինչպէս Մուշի մի զիւղի վրայ օր ցերեկով հարձակուել են քիւրզերը, շատ մարդիկ կոտորել տաւարը քշել, աները կրակել և երկու էլ աղջիկ են փախցրել:

Ծերունու գեմքը այլայլուեց:

— Ասում չեմ, էզուց՝ էլ օր էլ միենոյնը մեզ է սպասում, ի՞նչ ես կարծում:

Ո՞վ զիաէ նրանց մելիքն էլ մերի կաորն է. թէ ինձ հարցնես, էզպիսի ժողովրդին ինչ անեն, տեղն է. ի՞նչ մարդ է էն մարդը, որ չի կարողանալու իր ունեցած չ'ունեցածը պահպանել տւալպակներից, ինչու ենք պէտք մենք, ամօթ չէ մեզ, մեր զիւղացիներին, որ իմ հասակի մարդը գնայ, չեօլումը քնի ցորեն պահելու համար: Աչֆարբը կ'ասեմ էն ժողովրդին, որի կայքը, հարստութիւնը, տաւարը դաշտումը ընկած լինի և ոչ չհամարձակուի մօտենալ:

— Այս, էդ շատ զեղեցիկ կը լինէր, բայց ո՞տեղից գանենք հայերի մէջ էզպիսի մի ժողովուրդ, — հարցը ես:

— Երաեղից գտնենք, — արհամարտանքով պա-

տասխանեց ծերունին,—էղպիսի ժողովուրդ կար
և ես ինքս աչքովս տեսել եմ նրա արածները,
նրա նիստ ու կացը. Էդ ժողովուրդը մենք էինք,
լսում ես, մենք՝ Դ...ցիներս՝ մելիք Ղարազե-
զի ժամանակ: Եթէ համբերութիւն ունենաս
լսելու, ես կըպատմեմ քեզ, թէ ինչ ծանապարհ-
ներովն էր մեր ժողովուրդը հասել էն երջա-
նիկ զրութեանը:

—Մեծ ուրախութեամբ կըլսեմ քեզ, Բաբա,
պատմի՛ր:

—Ասած շատ հին չէ,—սկսեց Բաբան,—
բայց տես թէ, որքան է փոխուել մեր զիւղը Էդ
կարձ միջոցում: Ղօշումլըզի ժամանակն էր, 50
տարի սրանից առաջ, մեր զիւղն էն ժամանակ
շատ մեծ էր, մօտ 5—6 հարիւր տուն ուներ,
բոլոր աւերակները, որ տեսել ես սարերի գո-
շումը, բոլորը գեռ շէն էին: Մեր զիւղը և մի
քանի ուրիշ մօտ զիւղեր աղատ էին խանի
առուբերից, պատճառը՝ որ մեր պապերը առել
էին զիւղը Խանիցը. թէ որ ժամանակ լինի Էդ էլ
կըպատմեմ քեզ, թէ ինչպէս են առել զիւղը
Խանիցը. լաւ պատմութիւն է:

Նախիջևանում նստում էր Տասան - Խանը՝
ուռար նոր էր մակել Աղաջրանը, լրագիրներ էն
ժամանակը չկային, բայց լուրեր համնում էին:
Խանը ոսի հոտը լսելուց, մի քանի հաղար
զօրք հաւաքեց և սկսեց յարձակումներ անել
մեր զիւղերի վրայ: Անիրաւը գիտէր, որ ոսի
փէմ չէր կարող ոչինչ անել, վրէժն սկսեց զիւ-
ղերիցը հանել: Նո յարձակուեց մեր զիւղի վրայ
և մեծ աւերումներ արեց. բնակիներից որը սա-
րերը փախաւ, որն էլ կովում փչացաւ, կա-
նայք ու աղջկերը անօրէնները շատ փախցրին:
Որքան հարստութիւն, որքան ապրանք, որքան
տառար քշեցին տարան, զլում էր, որդիս, զլ-
լում, թշնամիս ի՞նչ տեսնի Էդ օրերը, բայց
Աստուծոյ օգնութեամբ ուները վրայ հասան
և անօրէններին քշեցին: Տարաբախտաբար Էդ
էլ չօգնեց մեզ: Ուռար վերցրեց երկիրը և հան-
գլասացաւ, բայց անիրաւ հարեւանը մնաց մի
և նոյնը, միայն Արազի միւս ափն ացաւ: Թը շ-
նամին, Ճշմարիտ է, էն ժամանակ էլ չէր հա-
մարձակվում աղատ յարձակումներ անել,
բայց զողի նման զիւղները յարձակուելուց և

կողոպուտներ անելուց չէր գագարում: Զինուած
թուրքերը զիշերն անցնում էին Արավը և սրա
նրա այգին հաւաքում, միւսի տունը թալանում,
անցնում գնում, կարծես մենք չարչարուել էինք,
աշխատել էինք, որ նրանք վայելեն: — Մեր ոչ-
խար ժողովուրդն էլ դիմանում էր այդ աւա-
զակութիւններին: Էղամէս մի քանի տարի ան-
ցաւ, երբ մի զիշեր թուրքերը հանցին Բար-
սեղենց տան դուռը, ներս մտան, տանեցոյ բո-
լորին կոտորեցին և գեղեցիկ Բալասանին հետ-
ները տարան: Բալասանը մեր զիւղի գեղեցկու-
հիների աչքն էր: Մեր ժողովուրդը նոր խել-
քի եկաւ, որ էդ անիրաւութիւնները տանելն
էլ անկարելի է, որ թշնամուց վախենալը ա-
ւելի վտանգաւոր է, քան թէ նրա հետ կոռուլը:
Դիւղեց շատ հոգի ձիաւորուեցանք, ընկանք
թուրքերի եաւից և երեք օրից յետ հաղիւ-հաղ-
կարողացանք Արավի էն ափին Բալասանին կի-
սամեռ ազատել վայրենի թուրքերի ձեռքից:
Անբաղդ Բալասանը երկու շաբաթ միայն ապ-
րեց, վախից սիրառ ճագել էր: Խեղձ աղջիկ...
Բարայի աչքերը լցուեցին...

Այդ միջոցին փոքրիկ Աքելը, Բաբայի ծոռնը,
դուրս պրծաւ տանից և Բաբային կանչեց իրիկ-
նահացի: Բարան ընդհատեց պատմութիւնը,
ձեռները լուաց մօտով անցնող աղբիւրում և
սկսեց մի ինչ որ աղօթք կարդալ: Ես օգնեցի
նրան վեր կենալու:

— Բարի՛ զիշեր, որդիս, տանն սպասում են,
էզուց եթէ ուզենաս, ես կըշարունակեմ պատ-
մութիւնս, միայն թէ գու միաս գցես, որտեղ
մնացինք էս օր, թէ չէ ես շուտ եմ մոռանում:

Ես Ճանապարհ դրի ծերունուն մինչև տուն,
բայց շատ նեղացայ չարաձի՛ Աքելի վրայ, որ
պատմութեան այդ հետաքրքիր տեղումն ընդ-
հատեց Բաբային: Ես դարձայ տուն Բաբայի պատ-
մութեան ապաւորութեան տակ: Բարան աչ-
քումն բարձրանում էր, ես կարծես արդէն մա-
սսամբ հասկանում էի նրա երեսի մռայլ արտայաց-
տութեան պատճառը, բայց այդ բաւական չէր,
ես պէտք է թերթէի նրա զէմքի բոլոր կնճիռնե-
րը, որպէս զի բոլոր կարգայի, բոլորն իմանայի,
ինչ զրուած էր այն զարեւոր կենդանի զրքի
մէջ, ինչ տանջում էր պատկառելի ծերունուն:

Միւս օրը շաբաթ էր: Երեկոյեան ես զնացի և կեղեցի: Բաւականին մարդ կար ժամռամ, այնտեղ էր և Բաբա Առաքելը իւր ծոռներովը: Ժամից յետոյ մենք միասին եկանք մեր թաղը: Բաբան նստեց իր սովորական տեղում և հրամայեց երեխսայոց, որ չերուխը բերեն:

—Հա, ասում էիր որ շարունակեմ,—ասաց Բաբան, մեծ բուխարէ փափախը հանելով գլւխից և ծնկանը դնելով—ախար չ'ասացիր, թէ որտեղ մնացինք իրէկ:

—Դու պատմեցիր, թէ ինչպէս երեք օրից յետոյ Բալասանին կիսամեռ յետ բերաք գիւղը և խեղձը երկու շաբաթից յետոյ վախճանուեց:

—Հա, էդ էի ասում, որ եթէ մեր ժողրվը զի համբերութիւնը մինչև բողազը չ'հասցնես, ձէն չի հանիլ բայց օրէնքը էդ չէ. իմ խելքս ուրիշ տեսակ է կարում, ես ասում եմ, որ չ'պէտք է թշոյլ տալ, որ թշնամին իր չարագործութիւններովը մեր համբերութիւնը հատեցնի: էդ խելքին էր և իմ գոված մելիք

Նարագիօղը, որի մահը մեծ կորուստ էր մեր և հարևան գիւղերի համար: Աֆֆարը մելիքըն էդ անցքից յետոյ բոլոր եկեղեցիների զանգակները թակել առռեց, գղիքներին անէ տուն գցեց և Ս. Մինասի բակումը մեծ ժողով կազմեց: Լաւ եմ մտաբերում էդ օրը, էլե շաբաթ՝ ը էր, մէկ սհաթի մէջ ամբողջ գիւղը հաւաքուեց նշանակած տեղը. Էստեղ էին գիւղի բոլոր աղստիկանները (սպիտակ միրուքաւոր), Էստեղ էին գիւղի հարուստ իշխաններն, Էստեղ էին բոլը ջահիլ տղամարդիկը, Էստեղ էի և ևս իմ երկու տղաններովը: Մերերը նստել էին կանաչ գետնի վրայ, ջահիլները կանգնած էին: Մինչև մելիքի գալը տղերքը զանազան խմբերի բաժանուած ասում խօսում էին: Շատերի խօսակցութիւնն անբաղդ Բալասանի մասին էր: Մեծերը վիճում էին, երիտասարդները լուս ու մունջ լսում էին: Յանկարծ տղերքը բղաւեցին «Մելիքն եկաւ, մելիքն եկաւ, տեսնենք ինչ է ասում, ինչու է մեզ էստեղ հաւաքել» Ամբոխը իսկայն շրջապատեց մելիքին, որ լաւ լսի նրա խօսքերը:

602 - 2009

5465/41

ՀԱՅՀ-ССРԱ.

— Տղէրք, — բղաւեց մելիքը վեր ցատկելով մի
մեծ գերեզմանաքարի վրայ. Նրա աչքերը կրակի
պէտ փայլում էին, արիւնն զլխովն էր տուել: Ամ-
բովսը իսկոյն լռեց և ծերերը վեր կացան աե-
ղերից: Խարած ծմբ ցաւխաց հայութ:

— Տղէրք, — կրկնեց նա, — վաղուց է, որ ես
ցանկանում եմ էս նպաստակով մի ժողով կադ-
մել, բայց վախենում էի, որ նպաստակիս չհաս-
նեմ, այժմ էլ եթէ ուղեցածս դլուխ չկայ,
կ'իմանամ, որ մեզանից անպէտք, մեզանից
վախկոտ ժողովուրդ չկայ: Ամբովսն ալեկոծուեց,
բոլորն իրար նայեցին, զարմացած, հարցական
դէմքերով: — Ոյս, ես կ'համոզուեմ, որ մենք կո-
րած ենք, և կորած ենք յաւիտեան: Թուրքե-
րը մեր այդիները թալանեցին, մենք սուս կա-
ցանք, մեր տները կողոպտեցին, մեր տաւարը
քշեցին, ձեն չհանեցինք, մեր կարիճներից շա-
տերին սպանեցին, մենք վրէժինդիր չեղանք:
Էս ի՞նչ է պատահէլ մեզ տղէ՞րք, ինչո՞ւ էք
էսքան վախկոտացել և սառել: Տեսէք, ինչպէս
են ապրում մեր հարաւան կարաբաղջիններն և
ամաչէք. որ սատանան կըհամարձակուի նրանց

մի մաղին զիպչել, մի՛թէ մենք նրանց եղայր-
ները չենք, մի՛թէ մենք մարդ չենք, հոգի չու-
նինք, մի՛թէ մեր պապերի արիւնը չէ վազում
մեր երակներումը, ինչո՞ւ ուրեմն մենք չպէտք
է կարողանանք գիմազրելու մեր թշնամիներին:
Ես չեմ խօսում հասան խանի սուշաւանքների
մասին, նա մեծ ոյժ էր և մեծ ոյժ էլ հար-
կաւոր էր նրան զիմազրելու համար, մենք այդ
չունենք և չկարողացանք գիմանալու, խօսքս
այն ճպոտ, ակլոր անիրաւների մասին է, որ
չբաւականանալով իրենց կոզմապուտներով. թա-
գունք սպանութիւններով համարձակված են
զիւղե մէջ մոնել և, ամաչում եմ ասել, մեր
պատիւր, մեր ընտանեաց պատիւր զերաւորել
ոտի սակ զցել, մեր սրբութիւնները պղծել:
Ո՞ր ազնիւ և քաջ մարդը կարսղ է եդ բո-
լոր լըբութիւնները տանել՝ թող ձայն տայ...
Ո՞վ ձեզանից ձանձրացել է իր հարպութիւնից,
իր և իր սիրելիների պատառելոց և կեանքից՝
թող ձեռք բարձրացնեն,.. Ո՞ւմ համար ցանկա-
լի է թշնամու բարբարոսութիւնները, անիրա-
ւութիւնները, հարստահարութիւնները, թող

էս բազմութեան առաջը դուրս գայ: Բոլորն էլ լուս էին և զուխները քարչ զցած: — Լուս էք, բոլորդ էլ լուս էք, ուրեմն ոչ ոք ձեզանից յանձն չի առնում տանել այդ անպատճռութիւնները, — շարունակեց մելիք: Ղարագեղը, — բայց երէկ էր միայն, որ այդ գագանների անբաղդ զոհին թաղեցիք, իսկ նրա ծնողներին ։ շաբաթ է միայն: Միթէ էղպէս շուտ մոռացութեան պիտի տաք էղ ծանր կորուսներդ, տղէլք, ժամանակ է, ժամանակ մեր գլխի ծարը տեսնել թէ չէ շուտով դուցէ մեղ բոլորիս նոյն վիճակը համարի: Երկաթը տաք տաք պէտք է ծեծել ասում է մեր առածը, թէ չէ սառչի, ուշ կը լինի: Հաստայնում եմ ձեզ, որ ինչ անելու ենք հիմայ կարող ենք լաւ անել երբ անբաղդ զոհերի պատկերները դեռ մեր սրտերիցը չեն անհետացել: Ո՞ր ջեւանը սառնասիրտ կարող էր նայել չքնաղ թալասանի դիակի վրայ: Ամօթ, հազար ամօթ ձեզ, ջահիլ ջեւաններ, երբ անպէտք, քաշալ թուրքը ձեր ծանկերից պէտք է խլէ շումալ ջէյրանը: Ջիւանները ամօթից զլուխները անդամ չըբարձրացրին: Ցանկանում

էք որ էկ անպատութիւններին, էկ լրբութիւններին վերջ զրուի, թէ ոչ ցանկանում էք որ թշնամու ուաքը մեր հողեց կտրուի, թէ ոչ պատասխանեցէք, աղէլք, — բարձրաձայն հարցրեց մելիքը:

— Համաձայն ենք, ցանկանում ենք, շատ լաւ կը լինի, — բղաւեցին ամենայն կաղմից:

— Երբ համաձայն էք, ուրեմն լսէք, թէ ինչ միջոց եմ առաջարկում զրա համար: Մեր զիւղը, շարունակեց մելիքը, — 600-ին մօտ տուն ունի, եթէ ամեն երկը տուն մէկ զինուած ջեւան (երիասարդ), տալու լինի, էղ կ'անի՛ 200 հոգի, ուրեմն մեր գիւղը կ'ունենայ 200 հոգի Պղեւուած պահապաններ, որ զիշերները մաս-մաս բաժանուած, կը շընէն պիւղի սահմաններում, էն ժամանակը. թշնամին թող համարձակուի ոտք գնել մեր հոգի վրայ, հաւատացնում եմ, որ մեր աղէրքը էնպէս օյին կը գան զլսներին, որ եկած ձանապարհներն էլ կը կորցնեն: Հը, համաձայն էք էս առաջարկութեանս, թէ ոչ, — հարցրեց նա:

— Համաձայն ենք, շատ լաւ միտք է, ափֆէ-

բիմ, մելիք, կեցցէ Հարադիօղը, — բղաւեցին բուրժեանքը միաձայն: Ես ինքս կրգնամ, — բղաւեց 90 տարեկան ծեր Վարդանը: Դու չես ձառնաշիլ վաղուց է որ նա մեռել է, — նկատեց ինձ թաքան:

— Որ համաձայն էք, շատ ուրսիս եմ և շատ էլ չնորհական՝ տղերք ձեր միաբանութեան և քաջասրութեան համար, ամենայն բան միաբանութեամբ է զլուխ գալիս, — ասաց մելիքը, — որ համաձայն էք, խնդրենք Ս. Մինասին, էլ որի բակումը էս վճիռը կայացել է, որ մեր խորհուրդը ամուր և գտատառ պահի և ինքն էլ մեղ օգնական ու պահապան լինի, որ շաւտավ նպատակներիս հասնենք:

Բոլորը զիխարփները հանելով երեսները դէպի եկեղեցին դարձրին և խաչ հանեցին:

— Իսկ դու, ով մելիք Մատթէոս, — ասաց Մելիքը դառնալով դէպի գերեզմանը, որի վրայ կանգնած էր, — վեպ եղեր էս փրկարար ուխտին, որ տալիս է քո ժողովուրդը գերեզմանիդ շուրջը հաւաքուած, վկայ եղիր, որ ոչ ոք մեզանից ուխտազանց չի լինիլ իր տուած խոստու-

մին: Թող ուխտազանցը, վախկոտ դաւաձանը հայրենիքից ու ազգից զրկուի և թշնամու բաժին դառնայ: Բոլորը նորից զիխարփները հանեցին և երեք անգամ բարձրաձայն աղաղակեցին. «Ամեն, ամեն, ամեն: — Այդ խօսքերը արտասանելուց բարայի աչքերը աստղերի նման փայլեցին, նա կարծես նորից ջահելացաւ, նոր կեանք ստացաւ: Յուղուած ծերունին փոքր ինչ կանգ առնելուց յետոյ՝ շարունակեց.

— Երբ բոլորը Ս. Մինասի և մելիք Մատթէոսի անունով երդուեցան հաստատ մնալ իրենց ուխտին, մելիքն առաւ զզրից թուղթ ու թանաք և ասաց. «Քիմայ ձեզանից ով ցանկանում է զիւզի համար պահապան գրուել թող մօտենայ և իր անունն ասիս: Ամբոխն սկսեց խառնուել իրար ձեղքել և ամենայն մարդ կամենում էր առաջնորդ զրուել: Մի քանի ծերեր էլ ուզում էին զրվել բայց մելիքը թոյլ չ'առեց. «Ջահիների համար ամօթ է», ասում էր նա: Էղ աեղ մէկ սհաթի մէջ 363 հոգի զրուեցան: Նատերը դէնք էին առաջարկում, ուրիշներ իրենց ձիաներն էին տալիս, ոչ ոք

պարտքի տակ չէր ուզում մնալ: Ես էլ գրուեցի իմ երկու աղանձովս:

Մի մռայլ ամպ ծածկեց ծերունու երեսը այդ խօսքերից յետք կնա փոքր ինչ կանգ տռաւ:

— Ասացի, որ 363 հոգի էդ օրը գրուեցան, բայց որովհետև էդքան հոգի շատ շատ էին և էդքան ձի էլ գիւղումը չէր գանուիլ մելիքը մի ուրիշ կարգադրութիւն էլ արեց: Նա ասաց, որ լաւ կրլինի, եթէ ամենայն շաբաթ միայն հարիւր հոգի զիշերները գուրս գան, իսկ միւսները հանգստանան: Մնայած թէ հոգին էլ նա թողեց սև օրուայ համար: Էդ առաջարկութիւնն էլ ժայռով շատ հուանեց: Հաջուով իմ տղէրքս երկրորդ շաբթին պէտք է զուրս գային, իսկ ես երբորդ: (Նրանք ինձնից շուտ էին զրուել:)

Մելիքի կարգադրութեամբ միւնցն օրը ճրագավառին գիւղի չորս զարպաներից և խումբ զինուած զինուորներ դուրս եկան՝ մէկ խումբը, որ ամենամեծն էր Գաւեր Բուլաղի զարպասից դէպի Արազի ափերը գնաց, միւս երկը հաւասար բաժանուած անցան, գիւղի միւս երեք

կողմերը գնացին: Գեղեցիկ էր էդ տեսարանը, զինուորուած հսկաներին ձիաների վրայ վրուփուալով տեսնելիս, մարդու արիւնն էր եփ գալիս, ծերերը նախանձում էին, ջահիներն անհամբեր իւմնց հերթին էին սպասում, գեղզալ աղջկերքը և կանայքը կտուրներից և դոնիրի ձեղքերից նբանց նայելով՝ հիանում ուրախանում էին: Թուկփերը ոչինչ բանից զիռ խաբար չէին: Էդ զիշերը չեղաց 5:6 թուանգի ձէն եկաւ: Էդ մեզ շատ անհանգստացրեց, էնպէս որ ամբողջ զիշեր զիւղս համարեա արթուն էր լուսացրել: Միւս օրը, վաղ առաւտեան բազարը լիքն էր ժողովրդով: Էնտեղ միզանի (համարտկական կշեռ) մօտ չորս թուրք կապած ընկած էին: Բոլորը հետաքրքրութեամբ նայում էին այդ անիրաւներին, դրանց բոնել էին քաշ բաղերումը: Մինչեւ մելիքի գալը շատերը գիւղնը իրենց ձեռքով արին, երբ եկաւ մելիքը, ինայեց աւաղակներին և դառնարժվ գէպի պահապանները՝ ասաց բարձր ձայնով թուրքերէն՝ աղէրք, ևս անգամ սրանց մեղք հկաք, շատ լաւ, բայց եթէ միւս անգամ էլ սրանք

ընկելու լինեն ձեր ձեռքը, ևս հրամայում եմ,
որ դրանց գատառտանը ձեր թրերով անէք,
լսում էք ասած:

—Հրամանքս, մելիք-աղոտ, լսում ենք, մենք
էլ շատ ուրախ ենք, չենց էղ էինք ուղղում թէ
չէ ով է էս մուրտառներին հապում ձիու վրայ
գիւղը բերում, —պատասխանեցին բռնողները:

—Իսկ հիմայ տարէք սրանց, տարէք ծակը
զցեցէք, թող էն մթնումը մեր պաւարների
աղքի մէջ իմանան գարշելեք, թէ ինչ է նշանակում ուրիշի հարստութիւնը գողանալ ու-
րիշի պատիւը ոտնակոխ անել: Նուառվ կրիզ-
րատուէք, վայրենի գաղաններ, շուտով, —ասոյց
մելիքը թուրքերէն և նորից հրամայեց, որ բանար
զցեն: Բանախ տեղ բաղարի ախոռատունն էր
ծառայում էն ժամանակ: Գղիրները վրաթափուե-
ցան և կապաճներին իսկոյն ախոռատունը
քարշ տուեն: Մէկ շաբթից յետոյ անիրաւների
թիւը մինչև 30-ի հաստ և ամենայն առաւօտ,
ուր բռնուածների մօտ մելիքը թուրքերէն բարձր
ձայնով՝ նշն խօսքերն էր կրկնում և հրամա-
յում ծակը զցելու:

Ամբողջ ասածի շարաթը տղէրքս իրենց զէն-
քերն էին սրբում, շնորհ կարգի բերում: Զի
մէկը ես ունէի, միւսը քո պապինն էր, — դա-
սաւ Բարոն դէպի ինձ: Հասաւ շաբաթ օրը,
մերոնք ձիւորուած գուրս եկան բազարի մէջ-
գանը (Հրամաղակը), օրտեղից պէսք է բա-
ժանուէին զտնագան կողմեր: Մեծ բաղմութիւն
էր գուրս եկել նոր խմբին Շանապարհ զցելու:
Տղերքը բաժանուեցան և ուրախ-ուրախ երգելով՝
գնացին գիւղի զանագան կողմերը: Առաջին եր-
կու գիշերը շատ հանդարտ անցաւ, բայց եր-
րորդ գիշերն ինչ բաներ պատահեցան, զա էլ
մի մէծ պատմութիւն է, որ ես դժուարնում
եմ պատմելու: Փոքր որդիս այդ անցքի պատ-
ճառով մեռաւ: Մերունու աչքերը լցուեցան
արտասուբով, նա չ'կարողացաւ շարունակել և
մի րոպէ կանդ տռաւ: Էղ տարաբաղդ գիշերը
էն թայի անիծած թուրքերը, թուով՝ 12 հոդի
ուզում էին եղել մանել մեր գիւղը գոլութեան
համար, բայց երբ մերնք գուրս են արձնում
նրանց առաջը, թուրքերն սկսում են փախչել: Մերոնք
սիրա առած ընկնում են նրանց յե-

ակից, քշում են մինչև Արագի էն թայլ (կողմը) և յարձակվում են նրանց գիւղի վրայ: Երբ ձևն ընկում է գիւղը, ամեն կողմից թուրքերը տաշտապանութեան են դուրս գալիս. Էդ տեղ Աճ կոտորած է լինում. թուրքերը կորցնում են 13 հոգի, շատերն էլ վերաւորվում են, իսկ մերսնը 3 հոգի են միայն կորցնում, իսկ 5-ը վերաւորվում են, բայց որպէս զի թշնամու ձեռքը չ'ցցեն, զիսկեները ձիաներով բերում են տուն: Մեռածներից մէկը Մինասս էր, միւսը մահտեսի Գաբրելի տղեն, երրորդը նաւասարդն էրից Գրիգորը, մի շատ քաջ և աղմիւ տայս: Էդ օրը սուդ և շիւան էր մեր գիւղումը, մեր տանը հօ էլ ինչ ասեմ: Բարան նորից արտասուեց, նրա շրթունքներն սկսեցին գողալ և նա էլ չ'կարողացաւ շարունակել: Ես նմանապէս գլուխս քարշ գցեցի, որ Բարան չ'տեսնէ, թէ նկատում եմ նրա սրամի վրովմաւնքը: Փաքը ինչ հանդարանելուց յեաց, նա կրկին շարունակեց:

— Բայց մելիքը խելօք մարդ էր, նա լաւ հասկացաւ մեր ցաւը և մեզ միսիթարելու ու զին-

որներին քաջալերելու համար սպանուածներին էնպիսի փառաւոր թաղում պատրաստեց, որ թագաւորի էր արժանի: Աստուած նրա հոգին լուսաւորի, մենք էլ նրան չենք մոռանում: Երեքին էլ մէկ օրում և մէկ շարքում թաղուցինք Ս. Մինասի բակումը, մելիք Մատթէոսի գերեզմանի մօտ, որտեղ 10 օր առաջ երդուել էինք հաւատարիմ մնալ մեր առած խոստումին: Թաղման օրն ամբողջ գիւղը գերեզմանատանն էր, էնտեղ էին և բոլոր 360 զինորները, չ'նայելով որ մի քանիսը վերաւորուած էին: Բոլորը կարգով կանգնել էին փորած գերեզմանների չօրս կողմը, ոտքից մինչև զմուխ զինուած, թուանքները ձեռներին բռնած (էդ էլ մելիքի կարգավորութիւնն էր): Քահանան երբ բոլոր աղօթքները կարգալուց յետոյ սկսեց օրհնել մեր ձեռքերի հողը, 120 թուանք յանկարծ միասին տրաքեցին, էպակս երեք անգամ տղերքը թուանքները կրակեցին և նրանց ծուխն ու գոռոցը աշխարքս բռնեց: Էդտեղ ես Աստուծուն փառք տուի, որ որդուս էնպէս փառաւոր մաշ պարզեց:

Երեք օր չանցած երեք գերեզմանների գլխին
երեք ուռենի տնկեցին, երեքն էլ կպան, մեծա-
ցան և մինչև հիմայ էլ էս չինարի նման հո-
վանաւորում են ննջեցեալիների ոսկրները։ Տղեր-
քըն էզ բոլորը տեսնելուց աւելի կլան, իրենց
ուխտած գործին, շատ անդամ՝ նրանք իրանք
էին յարձակվում թուրքերի վրայ և կրդապուտ-
ներ անում։ Էղափիսով կես տակուայ մէջ մեր
Դաշտիք Էսպէս սարսափի գյեցին շրջակայ թուրք
բնակիների վրայ, որ Եազըլու¹⁾ անունից ան-
գամ գողում էին։ Ինչու նոք հետու գնամ,
նրանք իրար անիծելու ժամանակ ասում են
«Բաւլամ տեսն եմ տեսն եմ որ տունդ
Եազըլու մտնիս։ Շատ թուրքեր էզ անիծ-
քը գեռ հիմայ էլ գործ են ածում։»

Եյո, որդիս, գու զարմանում ես, բայց էզ
Ճշմարիտ է, վեց ամիս չանցած էզ լիրը անըզ-
գամներին, էզ վայրենի գագաններին էզ տեղը
հասցըինք, բայց մեռաւ մելիք Ղարագեօզը, նրա
հետ մեռաւ և իր սկսած գործը 14 ասքին

չլրացած։ Նրա մահից յետոյ մի քանի ամիս
էլի շարունակեցին կիսակառու, յետոյ էզ էլ վեր-
ջացաւ։ կարծես բոլորովին մոռացան Ա. Մինա-
սին տուած երգումը մոռացան այն նշանաւոր
օրը, երբ բոլորը շրջապատած մելիք Մատթէոս
գերեզմանը, զիխաբայ «ամեն» աղաղակեցին։ Էդ-
պէս ամեն լաւ բան շուտ անցուկ է մեր մէջ,
իսկ չարչարանքը, տառապանքը ու նեղութիւնն
անվերջ է հայերիս համար։ Շատ չանցաւ, թուր-
քերը կամաց-կամաց նորից սկսեցին զուռիները
բարձրացնել փոքրիկ գողութիւններ անել յե-
տոյ աւելի կատաղեցան, իսկ հիմայ Էսպէս են
լրբացել որ մեր գիւղի մէջ, օրը ցերեկով մեզ
թալանում, անպատճեամբ են, բայց մենք ոչինչ
չենք անում։ Հաւատացնում եմ քեզ, որ ոչ
թէ 3 — 4 հարիւր, այլ 20 — 30 զինուած
մարդ ունենայինք հիմայ, ոչ ոք չէր համար-
ձակուիլ մեղ անսպատվելու, նոյնն տառում եմ և
քո պատմած մշեցիների համար։ Եթէ մենք էլ
նրանք էլ հետեւէինք էն փառաւոր անցեալին,
մեր գրութիւնը էսպէս չէր լինիլ։

Էհ, բաւական է, որդիս, գարգելս նորող-

¹⁾ Թուրքերէն Դաշտի։

վում են, թողնենք էս խօսակցութիւնը, հրեն Աքելն էլ դուրս եկաւ ինձ կանչելու, մոռացայ, որ էս օր շաբաթ է, տանը սպասում են, բարի գիշեր, որդի,—ասաց ծերունին և աղօթելով հեռացաւ:

ՀՀ Ազգային գրադարան



NL0167412

ԵՍԱ Յ ՀՅՊԵ